



## Մ Ե Ր Ի Ծ Ա Մ

(Հ Յ Ա Խ Ա Թ)



Է լ ք լ ա թ հ է ր ի ա թ պ ա պ լ ս,  
Խ ա շ խ ս ք ո ւ ռ ա կ ը տ ա կ լ ս,  
Է լ ի մ է ր թ ա մ է ր ե ա ն,  
Հ ա ք ա - չ ո ւ ք ա կ ե ր ե ա ն...

Տ ա ր ե ղ ի ը ք ա ս ո ւ մ ե ն, ո ր «ի  
Հ ն ո ւ մ»  
Հ ե ռ ո ւ մ է կ ա շ խ ա ր հ ը ի շ խ ա ն է ր  
կ ե ն ո ւ մ,

Ո ր ո մ է ր ո ր դ ի և ե ր կ ո ւ ա ղ ջ ի կ:  
Ե ր կ ա ր վ ա յ ե լ ե ց ն ա կ հ ա ն կ ը ե ր ջ ա ն ի կ.  
Ո ւ ե ր բ ծ ե ր ո ւ թ ք ը ն ո ր ա մ օ տ ե ց ա ւ՝  
Ի ր գ ա ն ձ ն ո ւ թ ա գ ը բ ա ժ ն ե լ ց ա ն կ ա ց ա ւ  
ն ա զ ա ւ ա կ ն ե ր ո ւ ն, ի ր մ օ տ ժ ո ղ ո վ ե ց,  
Ե ւ վ ե ր ջ ի ն կ ա մ ք ը ն ա ա յ ս պ է ս յ ա յ տ ն ե ց.

«Ուզում եմ, ասաց, իմ հարստութիւնն  
ու թագը թողնել ձեզ ժառանլութիւն.  
«Քայց կ'ըղձամ, ուխտիս չի տուած վախճան,  
«Գիտնալ ձեր սիրոյն դէպ ինձ աստիճան»:

Մեծ աղջիկն ասաց՝ «Հայր իմ պատուական,  
«Քեզ սիրում, պաշտում եմ ցայն աստիճան,  
«Որ պատրաստ եմ քեզ համար չամաշել,  
«Ու երկրորդ անդամ Քրիստոսին խաչել»:

«ՃՇն կենաս դստրիկ», ասաց ծերունին,  
Ու սիրով սեղմեց նորան իր սըրտին:

Եւ որդին ասաց՝ «Հայր իմ պատուական,  
«Ես էլ սիրում եմ քեզ ցայն աստիճան,  
«Որ սիրոյդ հանդէպ թագ, իշխանութիւն  
«Ընդիս մի չնշին բան են երևում.  
«Թէ քեզ պէտք լինի, և ինձ հրամայես,  
«Անտրտունջ կրակի մէջ ինձ կըտեսնես»:

«Քու էլ շՇն կենաս», ասաց ծերունին,  
Նորան էլ սիրով սեղմեց իր սըրտին:

Կրտսեր աղջիկը՝ անունը Մարիամ  
չեզ դէմքով եկաւ հօրը յանդիման,  
Ասաց՝ «Հայր, այնշափ սիրում եմ ես քեզ,  
«Որշափ արժանի է մի հայր քեզ պէս»:

Ես խօսքերը որ իշխանը լրսաւ,  
Բարկութիւնիցը սաստիկ կատղեցաւ.

Նորան այնպէս էր դուստրը երևում,  
Իբր թէ նորան բընաւ չէ սկրում,  
Ու կատաղաբար առաց նա նորան.  
«Հեռացիր աշքէս, անսիրոտ անըզզամ».  
Եւ պատրաստ էր նա խեղճուկին սպանել,  
Թէ աչքէն խսկոյն չի շտապէր փախչել։

---

Տակաւին Մարիամ տունը չի թողած,  
Մըտաւ իր խուցը, ու օրը սըգաց。  
Եւ ապա հալաւ, զարդք ու ակնեղէն  
Փաթթեց կապոցքում, ու փախաւ տընէն։

---

Ճատ գնաց, վնաց. իրիկուայ պահուն  
Տեսաւ դաստակերտ մի նա հեռուում,  
Ուզաց ներս մըտնել. սակայն կանգ առաւ,  
Կոշտ մըշակների վարմունքէն վախցաւ,  
Ու փոխեց ճանփան. մըտաւ մէկ անտառ  
Ու մոլորուեցաւ նորա մէջ իսպառ.  
Այնտեղ շատ օրեր նորա սընունդն էր  
Զուրը աղբիւրի, վայրի պըտուղներ,  
Երեք-չորս շաբաթ նա այդ անտառում  
Օր ու գիշեր էր լալով թափառում.  
Եւ երբ անտառի սահմանին հասաւ,  
Ճանապարհի վրայ սատկած էշ տեսաւ,  
Ճանեց դանակը, ու բերթեց էշին,  
Ու վըրան հագաւ նորա կոշտ կաշին,  
Որ մարդիկ նորան դըշխոյ չի ճանչնան,  
Այլ մէկ հասարակ աղախին գիտնան.  
Բայց իր զարդերը, զգեստը թանգագին  
Միշտ ծալած, փաթթած, պահած էր մօտին.

Եւ եկաւ այսպէս ազքատին հազուած  
 Մէկ գեղեցկաշէն դարպասի դիմաց.  
 Խնդրեց, պաղատեց նա կողկողադին  
 Որ առնուն նորան տան մէջ ազախին:  
 «Այժմ աղախին, ասին մեզ պէտք չէ.  
 «Կուզես գընա դաշտ, այծեր արածէ»:  
 Եւ դըշխսն մոռցաւ ծընունդ իւր ազնիւ  
 Ծըռեց վիզն, եղաւ այծերու հովիւ:  
 Եւ ամենայն օր ցրտին կամ տօժին  
 Արածեցնում էր այծերն արօտին:  
 Դրսանց այնպէս էր տըգեղ, անվայել,  
 Որ ոչ մի գեղզուկ չուզէր վրան նայել.  
 Ամբողջ օրերը դաշտերն էր շրջում  
 Ու արտամուլթենէն լալիս, հառաշում,  
 Կարօտ էր քաշում իւր քըրոջ, եղօր  
 Եւ իւր սիրական, թէի անզութ հօր:

---

Մի օր էլ կարօտն այնպէս սաստկացաւ,  
 Որ համբերելու էլ չրկարացաւ,  
 Եւ իւր մանկութեան օրերու նըման  
 Ուզաց զարդարուել գէթ էլ մի անզամ.  
 Այդ գիտմամբ տարաւ այծերուն հօտը  
 Զորի մէջ հոսող աղբիւրի մօտը  
 Սառնորակ զըրի մէջ լրացուեցաւ,  
 Արուսեակ աստղին նա նըմանեցաւ,  
 Գըռուղ ծամերը ու գէսը ծածան,  
 Լեռն ի վայր թափւող զըրի էին նըման.  
 Մատներին մատնիք ու վըզին մանեակ  
 Զողողողում էին ինչպէս տրեգակ:  
 Երբ վըճիտ զըրի մէջը նայեցաւ,  
 Իր գեղեցկութեան շատ ըզմայլեցաւ,

Եւ հայրենաւանդ անուշ տաղերով  
 Այն օր մեղմացուց իւր սրտին գորով.  
 Դադրեցան այծեր, ուլեր արածել,  
 Ըսկըսան նորա մեղեղին լրսել....  
 Մինչ այս ու մինչ այն՝ մուլթն եկաւ, կոխեց,  
 Եւ Մարիամը զգեստները փոխեց.  
 Բայց այդ միջոցին երևեցաւ նորան  
 Մի մատաղանաս գեղեցիկ իշխան.  
 Որ թափառելով՝ սար ու ձորերում  
 Այդ օրուայ որսի էրէ էր պտրում,  
 Եւ մի թաւ թըփի ետեր պահուած,  
 Մարիամի վըրայ նայում էր զմայլած.  
 Բայց երբ աղջիկը իշխանին տեսաւ,  
 Վախից, ամօթից լիստ շառագնեցաւ.  
 Ժողովեց շտապով զգեստն ու զարդերը,  
 Թողեց ձորի մէջ ուլերն, այծերը,  
 Հապճեպով դէպի դարպասը դընաց:  
 Բայց մուճակներէն մին այնտեղ մընաց.  
 Եւ այդ մուճակը այնպէս նաղուք էր,  
 Որ նորա նըման ոչոք տեսած չէր.  
 Իշխանը կոռցաւ ու գետնին առաւ,  
 Ու համբուրելով հետը տուն տարաւ:

---

Եւ այդ իսկ օրից սիրահարուեցաւ,  
 Սիամաղձ կոչուած չար ցաւը ստացաւ.  
 Թէ իւր արթնուլթեան և թէ՛ երազում  
 Միշտ այդ հովուուհու պատկերն էր տեսնում,  
 Եւ դիշեր ցերեկ նորա ականջին  
 Զայներ էր լսվում աղջըկայ երգին.  
 Հազար մունետիկ չորս կողմ ցրուեցան,  
 Ամեն ծակուծուկ շատ բըրբուեցան,

Բայց դատարկ ձեռքով դարձան մարդիկը —  
 Աւաղ, լոյս չեկաւ սիրուն աղջիկը՝  
 Երբ այս հնարներն էլ զուր, ունայն կորան,  
 Իշխանը տըւեց այսպիսի հրաման,  
 Թէ որ կին մուճակն այս ոտին հագնի,  
 Խսկոյն իշխանի կինը կըլինի։  
 Կանաքը, աղջըկունք շատ ուրախացան,  
 Սմենքը մեծ-մեծ յուսով լըցուեցան  
 (Ո՞ր կին չի կարծում իրեն արժանի  
 Կինը լինելու հըզօր իշխանի.)  
 Սմեն կողմերէն շտապով վազեցին,  
 Ոտները մուճակ խըրել փորձեցին.  
 Բայց, աւաղ աւաղ, ոչ թէ ոտերը,  
 Մուճակ չի մըտած նաև մատերը,  
 Տուն վերադարձան ամենքը ցաւած,  
 Սսելով «մուճակն շատ վատ է ձեած»։  
 Բայց սևամաղձը մատաղ իշխանին  
 Նրագ մօտեցնում էր գերեղմանին,  
 Եւ բացի հրաշքէն ոչ ճար, ոչ հընար  
 Կար աշխարհքիս մէջ այդ խեղճի համար։  
 Յանկարծ ծառաներն եկան պատմեցին,  
 Թէ մէկ հովուուհի ունի դրացին,  
 Որ դեռ մուճակը ոտին չափած չէ՝  
 Ու չափելու էլ սաստիկ կ'ամաշէ։  
 Իշխանն հրամայեց. հովուուհին եկաւ  
 Ու խսկոյն մուճակն իւր ոտին հագաւ.  
 Պալատականքը ղարմացած մնացին,  
 Ու կըծու ծալրով շնորհաւորեցին.  
 Բայց երբ իշխանի ծընողը իմացան  
 Այդ բոլոր անցքը՝ սաստիկ բարկացան,  
 Եւ լըսել անգամ չէին կամենում,  
 Որ հարս տուն բերեն կեղտոտ հովուուհուն։

Մարիամի հոգին խիստ վըրդութեցաւ,  
 Ազնիւ արինը մէջը խօսեցաւ,  
 Իշխանի ծնօղքին ասաց նա հեղիկ  
 «Զը զիտնաք դուք ինձ հասարակ աղջիկ,  
 «Եյծեր արածել իմ արուեստը չէր,  
 «Ինչպէս կարծում էք, ծննդենէս ի վեր,  
 «Միայն կոյր բաղդը այդպէս կամեցաւ  
 «Եւ դշխոյ Մարիամ հովուուհի դարձաւ.  
 «Զգեստս փոխելու թէ տաք ժամանակ,  
 «Իմ նվ լինելը դուք շուտ կիմանաք».  
 Պալատականքը լիրը ու բարձրածայն  
 Դարձեալ Մարիամի վրայ ծիծաղեցան:

---

Բայց Մարիամ գընաց հեռաւոր սենեակ  
 Ու մընաց այնտեղ մի կարճ ժամանակ,  
 Եւ երբ այնտեղից նա վերադարձաւ,  
 Բոլոր ժողովուրդն սաստիկ զարմացաւ,—  
 Կեղտոտ հովվուհին էլ չիկար այնտեղ,  
 Բազմականների առջև նորա տեղ  
 Կանգնած էր չընաղ դէմքով մի աղջիկ,  
 Վրայի հալաւը ճոխ ու գեղեցիկ,  
 Ոտից մինչ գըլուկս ոսկի ու գոհար  
 Ցոլում ու փայլում էին վառ ու վառ:

---

Այս հիանալի պատկերն որ տեսան,  
 Այնտեղ գտնըւողք ամենքն զարմացան,  
 «Ահա իսկական դըշխոյ, ասացին,  
 «Եւ արժանաւոր հարս մեր իշխանին»:  
 Իշխանը շտապեց իւր կամքը յայտնել,  
 Որ դորան ուղում է իւր կին անել:

Բայց Մարիամ նորան տըւեց պատասխան.  
 «Քու կինը կը լինիմ, իմ հըզօր իշխան,  
 «Ես այն ժամանակ, երբ իմ ծընովը  
 «Իր սրտէն հանէ դէպի ինձ ոխը,  
 «Իմ հարսանիքին զըտնըւի ներկայ,  
 «Եւ իր հայրական օրհնէնքը ինձ տայ»:

Խսկոյն դեսպաններ հօրը զընացին,  
 Պըշխոյի պսակին գալ հրաւիրեցին.  
 Բայց, աւաղ աւաղ, շատ օրեր չանցան.  
 Գիսպանք գլխակոր, տըրտում յետ դարձան:  
 — Ինչն է, թ տըլսուր, հարցուց աղջիկը:  
 — Ճատ տարաբաղդ է քու խեղճ հայրիկը,  
 Սոացին դեսպանք, գետնին նայելով,  
 Ըշքերից առատ արցոնք թափելով,  
 Քու խեղճ ծընողը խելազարուած է,  
 Ցուրտ, գիճին բանդի մէջ արգելուած է.  
 Հարազատները նորան խարել են,  
 Զեռքից ամեն բան յափըշտակել են,  
 Եւ երբ քու հայրը գանդատ է արել,  
 Առել են նորան ու բանդ են դըրել,  
 Բանդի դըռները ամուր են փակած,  
 Պահապաններով բանդը շուրջ պատած:  
 Մարիամ լըսելով այս պատմութինը,  
 Դառըն ողբաց հօր թըշտառութինը,  
 Փիսայ ու պըսակ նա մըտքէն հանեց,  
 Ծընկերը կոծեց, հող գլխուն ցանեց,  
 Եւ չըդադրեցուց իւր արցոնքն ու լաց, —  
 Այսպէս նա իւր հօր սե բաղդը սըգաց:

Փեսան ուզում էր Մարիամին սփոփել,  
 Հօր անբաղդութեան վըրէժը հանել.  
 Մարիամ լոկ խօսքով սփոփուել չէր ուզում,  
 Միշտ ու հանապաղ այսպէս էր ասում,  
 «Մինչև իմ հայրը բանդէն շաղատի  
 «Ու նորից փառքով գահը չի նըստի,  
 «Եւ հոգւով մարմնով չի առողջանայ,  
 «Հարսանիքիս օրն ներկայ չինինա  
 «Թէկուզ իրարով գան երկինք գետին—  
 «Բընաւ լինելու չեմ ես քո կին»:

Տեղից վեր թըռաւ բաջ իշխանորդին,  
 Բազմաթիւ զօրքեր ժողովեց շորս-դին,  
 Զէնք ու զրահով սպառազինեցաւ,  
 Դաւաճանների վըրայ սըլացաւ,  
 Նենդութեամբ տիրած աշխարհէն փախցուց  
 Ու հարսի հօրը գահը նըստեցուց:  
 Թէկ խելաչար էր խեղճ ծերունին,  
 Բայց չէր տակաւին անցել մէկ տարին,  
 Մարիամը այնքան ջանաց, աշխատեց,  
 Որ այդ ցաւէն էլ հօրը ազատեց:

Ել ոչինչ խափան չիկար պայմանին  
 Քաջ իշխանորդու ու հեղ Մարիամին.  
 Հարսանիքն եղաւ ճոխ ու մհծածախ,  
 Բոլոր հիւրերը էին շատ ուզախ,  
 Զութակ ածեցին, փողեր փըշեցին,  
 Զանզեր քառասուն օր հնչեցուցին:

Եւ իմ հէքիաթը ահա վերջացաւ:

Երկընքին երկու խընձոր վայր ընկաւ,  
Մէկը լըսողին,  
Մէկը պատմողին,  
Զօփն էլ հէքիաթիս ականջ շիդնողին:

Գամառ-Քարիստա




---

Այս ոտանաւորը մենք հանում ենք հանգուցեալ բանաստեղծի ձեռագիր տեսրակից, որ Պ. Գրիգոր Զալիբուշեանը ամենայն սիրելութեամբ դրեց մեր տրամադրութեան տակ. Արտ տեսրակը, որ 1881 թուին տպագրուած բանաստեղծութիւնների հատորիկի հետ միասին ամփոփուած է մի կազմի մէջ, ունի իւր վերայ հետևեալ համառօտ զեկուցումը՝ «Միսյն այս տարի, այսինքն՝ 1885 Սեպտեմբերի 18-ին սկսեցի թղթերիս մէջ ցըիւ ընկած ոտանաւորներն ժողովելու. իսկ մինչև այժմ ես ամենեին հոգս տարած չեի այդ մասին, և այդ պատճառաւ հարցւաւոր ոտանաւորներ անդարձ կորած պիտի համարել բարեկամացս և ծանօթներիս մօտ».

Ե. Շահազիզ